ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

✆ 0256-2-14-75

էլ.փոստ: loriberd.lori@mta.gov.am

թիվ 236

« 15 » ապրիլի 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝

պարոն Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2019թ. ապրիլի 09-ի թիվ 61-Ա, ապրիլի 11-ի թիվ 62-Ա և ապրիլի 15-ի թիվ 64-Ա, 65-Ա որոշումները:

Առդիր՝ էլեկտրոնային նյութեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«09» ապրիլի 2019թ. № 61-Ա

### ՀՀ ԼՈՌՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՋԱՆ ԳՅՈՒՂԻ 06--038-0033-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ , ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 01.04.2019Թ. ԹԻՎ 56-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեջան գյուղի բնակիչ Սասուն Վազգենի Մարգարյանի կողմից ներկայացված դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 15.03.1991թ. թիվ 04 որոշումը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքի 34-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0033-0003 ծածկագրում գտնվող 0.217 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝
   ա/ Լեջան գյուղի 06-038-0033-0003 ծածկագրի հողամասի մակերեսը 0.217հա
   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ն կետում նշված 0.217 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց համատեղ սեփականության իրավունքով վերահատկացնել Սասուն Վազգենի Մարգարյանին,Կարինե Վոլոդյայի Գոքորյանին, Սուսաննա Սասունի Մարգարյանին՝ ճանաչել նրանց սեփականության իրավունքը:

3. Ուժը կորցրախ չանաճել Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 01.04.2019 թ. թիվ 56-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

2019թ. ապրիլի 09
գ. Լոռի Բերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«11» ապրիլի 2019թ. № 62-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂԵՍ ԳՅՈՒՂԻ 06-056-0009-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 06-056-0009-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կողես գյուղի բնակիչ Գեուրք Ալբերտի Հարությունյանի կողմից լիազորված անձ՝ Փայլակ Ռաֆիկի Մամաջանյանի դիմումը, 05.04.2019թ. թիվ 931 սեղանամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Գագիկ Մեսրոպյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի տեղագրական հատակագիծը, ղեկավարելով՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքի 34-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Կողես գյուղի 06-056-0009-0003 ծածկագրում գտնվող 0.205 հա մակերեսով բնակելի կառուցման հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Լոռի Բերդ համայնքի Կողես գյուղի 06-056-0009-0003 ծածկագրի հողամասի մակերեսը 0.205 հա

   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ն կետում նշված 0.205 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Գեուրք Ալբերտի Հարությունյանին, իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տների և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի, Կողես գյուղի 06-056-0009-0003 ծածկագրի տակ գտնվող 0.205 հա մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 70.82 քմ. մակերեսով բնակելի տան առաջին հարկի և 74.50 քմ. մակերեսով բնակելի տան երկրորդ հարկի և 9.19 քմ. մակերեսով աստիճանավանդակի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել Գեուրք Ալբերտի Հարությունյանի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

2019թ. ապրիլի 11
գ. Լոռի Բերդ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » ապրիլի 2019թ. № 63-Ա

### ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

**1.** Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու նիստ 2019թ. ապրիլի 19-ին ժամը 11:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով.

**1)** Լոռի Բերդ համայնքի ավագանու 2019թ. ապրիլի 19-ի նիստի օրակարգի հաստատում:

**(Զեկուցող Ա. Մարտիրոսյան)**

**2)** Լոռի Բերդ համայնքի 2019թ. բյուջեի կատարման եռամսյակային հաղորդումը հաստատելու վերաբերյալ:

**(Զեկուցող Ա. Ներսիսյան)**

**3)** «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ը «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ վերանվանելու, մանկապարտեզի կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու վերաբերյալ:

**(Զեկուցող Ա. Չոբանյան)**

**4)** Լոռի Բերդ համայնքում մայիսի 9-ի «Հաղթանակի օրվա» կապակցությամբ հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին նվերներ տրամադրելու վերաբերյալ:

**(Զեկուցող Լ. Մովսիսյան)**

**5)** Լոռի Բերդ համայնքում մայիսի 8-ի «Երկրապահի օրվա» կապակցությամբ ԵԿՄ Ստեփանավանի տարածքային ստորաբաժանմանը գումար նվիրաբերելու վերաբերյալ:

(Զեկուցող Ա. Չոբանյան)

6) Վերջին զանգի կապակցությամբ Լոռի Բերդ համայնքի դպրոցների երեխաներին նվերներ տրամադրելու վերաբերյալ:

(Զեկուցող Լ. Մովսիսյան)

7) Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու, Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերը, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության հողամասերը, գյուղատնտեսական նշանակության հողերը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու և աճուրդով օտարելու վերաբերյալ:

(Զեկուցող Ք. Մելիքջանյան)

8) Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի միջնակարգ դպրոցին համայնքի 2019թ. բյուջեից գումար տրամադրելու վերաբերյալ:

(Զեկուցող Լ. Մովսիսյան)

9) Լոռի Բերդ համայնքի 2019թ. բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

(Զեկուցող Լ. Մովսիսյան)

10) Լոռի Բերդ համայնքի բնակիչներին տրամադրված սոցիալական օգնության հաշվետվության վերաբերյալ:

(Զեկուցող Լ. Մովսիսյան)

11) Լոռի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկայի ծառայությունների մատուցման սակագները հաստատելու վերաբերյալ:

(Զեկուցող Ա. Չոբանյան)

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ 2019թ. ապրիլի 11
գ. Լոռի Բերդ

Նախագիծ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

ՕՐԱԿԱՐԳ

**Անցկացման վայրը.** Լոռի Բերդի համայնքապետարան

**Անցկացման ժամանակը.** 19.04.2019թ. ժամը 11:00-ին

**1)** Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը:

**1. 1.** Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու նիստ 2019թ. ապրիլի 19-ին ժամը 11:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով.

1) Լոռի Բերդ համայնքի ավագանու 2019թ. ապրիլի 19-ի նիստի օրակարգի հաստատում:

**(Զեկուցող Ա. Մարտիրոսյան)**

**2)** Լոռի Բերդ համայնքի 2019թ. բյուջեի կատարման եռամսյակային հաղորդումը հաստատելու վերաբերյալ:

**(Զեկուցող Ա. Ներսիսյան)**

**3)** «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ը «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ վերանվանելու, մանկապարտեզի կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու վերաբերյալ:

**(Զեկուցող Ա. Չոբանյան)**

**4)** Լոռի Բերդ համայնքում մայիսի 9-ի «Հաղթանակի օրվա» կապակցությամբ հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին նվերներ տրամադրելու վերաբերյալ:

**(Զեկուցող Լ. Մովսիսյան)**

**5)** Լոռի Բերդ համայնքում մայիսի 8-ի «Երկրապահի օրվա» կապակցությամբ ԵԿՄ Ստեփանավանի տարածքային ստորաբաժանմանը գումար նվիրաբերելու վերաբերյալ:

**(Զեկուցող Ա. Չոբանյան)**

**6)** Վերջին զանգի կապակցությամբ Լոռի Բերդ համայնքի դպրոցների երեխաներին նվերներ տրամադրելու վերաբերյալ:

**(Զեկուցող Լ. Մովսիսյան)**

**7)** Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու, Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու, համայնքային

սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերը, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության հողամասերը, գյուղատնտեսական նշանակության հողերը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու և աճուրդով օտարելու վերաբերյալ:

**(Զեկուցող Ք. Մելիքջանյան)**

**8)** Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի միջնակարգ դպրոցին համայնքի 2019թ. բյուջեից գումար տրամադրելու վերաբերյալ:

**(Զեկուցող Լ. Մովսիսյան)**

**9)** Լոռի Բերդ համայնքի 2019թ. բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

**(Զեկուցող Լ. Մովսիսյան)**

**10)** Լոռի Բերդ համայնքի բնակիչներին տրամադրված սոցիալական օգնության հաշվետվության վերաբերյալ:

**(Զեկուցող Լ. Մովսիսյան)**

**11)** Լոռի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկայի ծառայությունների մատուցման սակագները հաստատելու վերաբերյալ:

**(Զեկուցող Ա. Չոբանյան)**

2. Ելույթներ, առաջարկություններ:
3. Նիստի փակում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«15» ապրիլի 2019թ. № 64 Ա

## ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՎԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ 06-025-0102-0008 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 2.844 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ԵՎ 06-025-0101-0015 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 0.9742 ՀԱ ԽՈՏՀԱՐՔԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բովաձոր գյուղի բնակիչ Վոլոդյա Գարեգինի Խառատյանի կողմից ներկայացված դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը «Գագիկ Մեսրոպյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի տեղագրական հատակագիծը, ղեկավարելով՝ ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքի 34-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Բովաձոր գյուղի 06-025-0102-0008 ծածկագրում գտնվող 2.844 հա մակերեսով վարելահողի և 06-025-0101-0015 ծածկագրում գտնվող 0.9742 հա մակերեսով խոտհարքի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Բովաձոր գյուղի 06-025-0102-0008 ծածկագրի վարելահողի մակերեսը 2.844 հա, և 06-025-0101-0015 ծածկագրի խոտհարքի մակերեսը 0.9742 հա

   բ/ հողամասերի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ն կետում նշված 2.844 հա մակերեսով վարելահողը և 0.9742 հա մակերեսով խոտհարքը, որոնք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով

վերահատկացնել Վոլոդյա Գարեգինի Խառատյանին՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ

2019թ. ապրիլի 15
գ. Լոռի Բերդ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«15» ապրիլի 2019թ. № 65Ա

## ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՎԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ 06-025-0101-0034 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 2.8062 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ԵՎ 06-025-0101-0016 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 0.99285 ՀԱ ԽՈՏՀԱՐՔԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բովաձոր գյուղի բնակչուհի Աիդա Գերասիմի Մաղաքյանի կողմից ներկայացված դիմումը, «Գագիկ Մեսրոպյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի տեղագրական հատակագիծը, ղեկավարելով՝ ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքի 34-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

**Ո Ր Ո Շ Ու Մ  ԵՄ**

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Բովաձոր գյուղի 06-025-0101-0034 ծածկագրում գտնվող 2.8062 հա մակերեսով վարելահողի և 06-025-0101-0016 ծածկագրում գտնվող 0.99285 հա մակերեսով խոտհարքի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Բովաձոր գյուղի 06-025-0101-0034 ծածկագրի վարելահողի մակերեսը 2.8062 հա և 06-025-0101-0016 ծածկագրի խոտհարքի մակերեսը 0.99285 հա

   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ն կետում նշված 2.8062 հա մակերեսով վարելահողը և 0.99285 հա մակերեսով խոտհարքը*, որոնք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով

սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Աիդա Գերասիմի Մաղաքյանին ՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում:

ԼՈՌՈՒ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ

2019թ. ապրիլի 15

գ. Լոռի Բերդ